ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ
ԳԵՎՈՐԳ Դ ՔԵՐԵՍՏԵՃՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ (ԿԹՂ. 1866-1882 ԹԹ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՅՐ ԱԹՈՌՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 130-ԱՄՅԱԿԸ

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մեծ շուքով նշվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնադրման 130-ամյա հոբելյանը:

130 տարի առաջ, 1874 թ., Միածնաէջ Ս. Էջմիածնում, Ամենայն Հայոց Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի ջանքերով իր դռները բացեց հոգևոր ճեմարանը՝ դառնալով ժամանակի ամենահեղինակավոր կրթօջախը Հայաստանում: Այսօր էլ, որպես բարձրագույն հոգևոր հաստատություն, այն շարունակում է իր առաքելությունը՝ կրթելով հոգևորականների նոր սերունդ:

Տոնական հանդիսություններն սկսվեցին Մայր Տաճարում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցված Ս. Պատարագով: Պատարագիչն էր Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը: Հընթացս արարողության Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով 130-ամյա հաստատության անցած ուղուն և առաքելությանը (տե՛ս էջ 47):

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանի և Մփյուռքի թեմակալ առաջնորդներ ու Մայր Աթոռի միաբաններ, Հայ Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչ Վարդան արքեպիսկոպոս Քեշիշյանը, ՀՀ ԱԺ պատգամավորներ, ԳԱԱ նախագահ Ֆ. Սարգսյանը, ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը, ՀՀ գրողների միության նախագահ Լ. Անանյանը, հայաստանյան տարբեր ԲՈՒՀ-երի պատասխանատուներ, մշակույթի և գիտության նշանավոր գործիչներ:

Ս. Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Տաճարի բակում տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ երանաշնորհ այն Հայրապետների հոգիների հանգստության համար, որոնց անմիջական հոգածությամբ ավելի քան մեկ դար գործել է ճեմարանը:

Երեկոյան Վեհարանում տեղի ունեցած հանդիսությունը ևս նվիրված էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնադրման հոբելյանին:

Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը բացելով հանդիսությունը՝ անդրադարձավ Գևորգ Դ երանաշնորհ Հայրապետի տեսիլքին և մեկ անգամ ևս արժեվորեց Հոգևոր Ճեմարանի առաքելությունը:

Այնուհետև ճեմարանի անցած ուղու և այսօրվա գործունեության մասին խոսեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը (տե՛ս էջ 93):

Ճեմարանի «Հայոց պատմություն» առարկայի դասախոս Պետրոս Հովհաննիսյանի զեկուցումը ևս նվիրված էր ճեմարանի պատմությանը (տե՛ս էջ 90):

Ներկաներին ողջունեց նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը: Նա շնորհավորեց բոլորին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակի կապակցությամբ՝ նշելով, որ Մայր Աթոռը դարերի ընթացքում միշտ էլ եղել է կրթության և գիտության այն դարբնոցը, որ մեր ազգին և պետությանը տվել է արժանավոր զավակներ: Սերգո Երիցյանը կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին պարգևատրեց ոսկե հուշամեդալով, իսկ ճեմարանին՝ նախարարության պատվոգրով

Շնորհավորական խոսքեր ասացին ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ԵՊՀ ռեկտոր Ռաֆիկ Մարտիրոսյանը, որը ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանին պարգևատրեց համալսարանի բարձրագույն՝ ոսկե մեդալով, Բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակի առիթով ելույթներ ունեցան նաև Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, ճեմարանի դասախոսներ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը (տե՛ս էջ 98) և Պետրոս Բեղիրյանը:

Վերջում ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Նորին Սրբությունը՝ հույս հայտնելով, որ այսուհետ ևս ճեմարանականները փառք ու պատիվ պիտի բերեն մեր նորանկախ պետությանն ու մեր լուսավորչահաստատ Սուրբ Եկեղեցուն՝ անմնացորդ նվիրումով լծվելով իրենց առաքելության կատարմանը մեր ժողովրդի կյանքում:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 130-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, կրթության և գիտության շնորհակալ գործի պատվարժան մշակներ, հյուրեր և սիրելի սաներ.

Փառք և գոհություն ենք վերառաքում երկինք, որ Տերը մեզ՝ Հովվապետ, հովիվ և հոտ, արժանի դարձրեց միասնաբար տոնախմբելու 130-ամյա հոբելյանը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի: «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ»:

Այսօր մենք արժևորում ենք լուսավորչահաստատ հոգևոր կրթական հաստատության առաքելությունը մեր ժողովրդի կյանքում, նոր զարթոնքը՝ կապված Մեծագործ Գևորգ Դ Հայրապետի անվան հետ, և վերջին 130 տարիների գործունեությունն ու հարուստ վաստակը: Մեծ ու անփոխարինելի ժառանգություն ունի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, լուսավոր ճանապարհի բարի արդյունքներ, որոնց մասին ևս մեկ անգամ լսեցինք Վեհարանի այս հարկի ներքո բանախոսների պատմական անդրադարձումներով ու գնահատականներով: Հիշվեցին գործեր, անցյալի մեծ գործիչների անուններ, ում նվիրումը, ազգասիրությունն ու հայրենասիրությունը մեզ հետ են այսօր աննյութական, բայց իրական ներկայությամբ:

Մեր հոգիները լեցուն են բերկրանքով, ցնծությամբ և հպարտությամբ, բայց նաև ծանրորեն իջնում է մեր ուսերի վրա պարտականությունը՝ արժանավոր շա-

ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏՅԱՆ ԿԱՐԳ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻ ԱՌՋԵՎ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳԵՄԱՐԱՆԻ 130-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Фундаментальная библиотека

ՃԵՄԱՐԱՆԻ 130-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ղունակողները լինելու մեր հայրապետների, լուսամիտ վարդապետների, եվիրյալ հոգևոր ու ազգային գործիչների ազնիվ նպատակների, գործի ու գործունեության և թողած ժառանգության: Այսպիսի մեծ պատասխանատվության առջև մնում է Մեզ աղոթք բարձրացնել երկինք և խնդրել, որ դուք էլ ձեր աղոթքները միացնեք աղոթքիս՝ հայցելով, որ Տերը օգնական լինի մեզ հաջողությամբ իրականացնելու այն, ինչ որ մեր պարտքն է մեր հայրերի առջև, մեր պատմության առջև, մեր գալիք սերունդների ու ժամանակների առջև:

Մեր Եկեղեցին այսօր իր առաքելության ճանապարհին բազմաթիվ խնդիրներ ունի ծառացած, որոնց հաղթահարումով հավատն ու քրիստոնեական ճանաչողությունը, մեր հոգևոր արժեքները, մեր հայրերի ժառանգությունը պիտի անբաժանելի դառնան մեր ժողովրդի կյանքից, որպեսզի այն լինի ասպվածահաճո, լինի շաղախված առ Քրիստոս սիրով, որպեսզի արդարությունը, ճշմարտությունը, միաբանությունն ու եղբայրսիրությունը տիրապետող ու գերակա արժեքները լինեն հասարակական կյանքի: Արդարև, ավելի դժվարին ժամանակներ է տեսել մեր Եկեղեցին և Գևորգյան Ճեմարանը: Գերաշնորհ Տ. Եզնիկ Սրբազանը հիշեցրեց, որ եղել են 35 տարիներ, երբ 35 եկեղեցականներ կային Հայաստանում: Այսօր միխիթարված ենք ասելու, որ միայն անցնող հինգ տարիների ընթացքին ավելի քան 120 եկեղեցականներ ենք ձեռնադրել, ավելի քան քառասուն եկեղեցականներ իրենց կրթությունն են ստանում արտերկրի ասպվածաբանական բարձրագույն հաստատություններում: Նրանցից յոթն արդեն որպես ասպվածաբանության պսակավորներ, մագիստրոսներ վերադարձել են և ծառայության են կոչված եկեղեցական տարբեր բնագավառներում:

Ժամանակի խնդիրն է, և մեր ժողովրդի պահանջն է, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պատրաստվեն արժանավոր եկեղեցականներ, Աստծո Սուրբ Սեղանի եվիրյալ սպասավորներ, ովքեր գան զորացնելու, անառիկ դարձնելու մեր ժողովրդի հոգևոր աշխարհն ու հոգևոր կյանքը: Մեզ համար մեծ ուրախություն ու միխիթարություն է նաև, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հոբելյանը տոնախմբում ենք կրթության ու գիտության մեծանուն ու արժանավոր գործիչների հետ միասին: Առավոտյան միասնաբար աղոթքի կանգնեցինք ձեզ հետ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, միասնաբար խոնարհում բերեցինք, հարգանք մատուցեցինք լուսամիտ մեր Հայրերի, մեր Հայրապետների հիշատակին և ահա մինչև երեկոյան այս ուշ պահն ամփոփում ենք հանդիսությունների շարքն այն վստահությամբ, որ համատեղ ջանքերով պիտի կարողանանք իրականացնել մեր բոլոր ապասումները, ծրագրերը, մեր առաքելությունը:

Հոբելյանական այս առիթով, սիրելիներ, գնահատանքի Մեր խոսքն ենք բերում ամենքիդ ձեր նախանձախնդրության ու պատրաստակամության համար, այն բոլոր ազնիվ խոսքերի, այն բոլոր գնահատականների, որ հնչեցին այստեղ ձեր ելույթներում, նաև այն շնորհավորանքների, որ ուղղվեցին Մեզ՝ ինչպես Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակի, այնպես և Մեր գահակալության հնգամյակի առիթով: Մեր շնորհակալությունն ենք բերում պարգևների համար,

գնահատականը՝ մեր սիրելի դասախոսներին, Գևորգյան Ճեմարանի տեսչությունը և հոբելյանական հանդիսությունները կազմակերպող հանձնախմբի անդամներին, ովքեր նախանձախնդրությամբ կատարում են իրենց ծառայությունը հոգևոր կրթօջախի հարկից ներս: Մեր գնահատականն ենք բերում նաև ճեմարանի ուսանողներին իրենց բարեջանության և ուսման հանդեպ դրսևորած նախանձախնդրության համար: Պիտի փառավորենք մեր Եկեղեցու բարի անունը:

Թող Տեր Աստված շեն ու հաստատուն պահի Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, առատորեն արգասավորի մեր Եկեղեցու առաքելությունը մեր ժողովրդի կյանքում և զորացնի մեզ մեր առաքելության մեջ՝ հավատով, հույսով և սիրով: Աստված օգնական մեզ ամենքիս, Աստուծո շնորհը, սերը և խաղաղությունը թող լինի մեզ հետ, մեր ժողովրդի հետ այժմ և հավիտյանս, ամեն:

Սիրելիներ, Մենք այսօր հոգեկան ուրախություն ունենք գնահատանքի արժանացնելու Գևորգյան հոգևոր Ճեմարանի դասախոսներին՝ կրթօջախի հարկի ներքո իրենց ազնիվ ծառայության ու վաստակի համար: Այսօր «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանի Կոնդակը պիտի հանձնենք նաև Գևորգյան հոգևոր Ճեմարանի տեսուչ, սիրելի Տեր հորը՝ Տեր Եղիշե ավագ քահանա Սարգսյանին, ում շքանշանով պարգևատրել ենք, երբ նշում էինք իր ծննդյան 75-ամյա հոբելյանը:

Մեր Եկեղեցու բարձր պարգևով՝ «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանով պարգևատրում ենք տիար Պետրոս Բեղիրյանին, տիար Պետրոս Հովհաննիսյանին և տիար Սիմոն Գրքաշարյանին: «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրում ենք տիար Պարգև Շահբազյանին և տիար Խորեն Պալյանին: Նրանց ձեռքերում կրթվել են ճեմարանականներ և շարունակում են կրթվել:

Վերստին Մեր գնահատանքն ենք բերում բոլոր նրանց, ովքեր ներդրում, մաս և բաժին ունեն հոգևորական նոր սերնդի պատրաստության նվիրական գործում: Թող Աստված օրհնի ձեզ, պահի, պահպանի ձեզ քաջառողջ և երջանիկ և ձեր աշխատանքում պարգևի ձեզ հոգու բերկրանք և ուրախություն: Այժմ աղոթքով փակենք այսօրվա մեր երեկոն:

Վեհափառ Հայրապետը Գևորգյան հոգևոր Ճեմարանի 130-ամյակի կապակցությամբ, ի գնահատություն ճեմարանին և Հայ Եկեղեցուն մատուցած իրենց ծառայության, «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ հանձնեց ճեմարանի ներկա և նախկին դասախոսներ Սիմոն Գրքաշարյանին, Պետրոս Բեղիրյանին, Պետրոս Հովհաննիսյանին և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան՝ Պարգև Շահբազյանին ու Խորեն Պալյանին:

Հանդիսությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, գիտության և մշակույթի ճանաչված գործիչներ:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Գևորգյան հոգևոր Ճեմարանի երգչախումբը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ